ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, կից ներկայացնում եմ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների օգտագործումը ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը երկարաձգելու մասին» Ազգային ժողովի որաշման նախագիծը, որոշման ընդունման հիմնավորումը, ինչպես նաև քննիչ հանձնաժողովի որոշումը:

Նկատի առնելով այն հանգամանքը, որ իրավունքի ուժով ստեղծված քննիչ հանձնաժողովի գործունեության ժամկետը լրանում է 2022թ. ապրիլի 22-ին, խնդրում եմ ներկայացված որոշման նախագիծը ներառել 2022թ. ապրիլի 12-ին գումարվող Ազգային ժողովի հերթական նիստերի օրակարգում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

08.03.2022թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված եւ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների օգտագործումն ուսումնասիրող Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի լիազորությունները երկարաձգել մինչև վեց ամսով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հանձնաժողովը ստեղծվել է իրավունքի ուժով՝ 22.10.2021 թվականին, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի գրավոր պահանջով:

Հանձնաժողովի քննության առարկա է սահմանվել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների (52,703,114,000 ՀՀ դրամ) օգտագործումը:

Հանձնաժողովի անդամների թիվը (տասնմեկ) սահմանվել է Ազգային ժողովի 27.10.2021թ. թիվ ՀՕ-31-Լ որոշմամբ, իսկ Հանձնաժողովի կազմը հաստատվել է Ազգային ժողովի նախագահի 26.11.2021թ. թիվ Կ-190-Ա կարգադրությամբ և հրապարակվել է 29.11.2021 թվականին:

Հանձնաժողովի առաջին նիստը գումարվել է 30.11.2021թ., որտեղ հաստատվել է հանձնաժողովի աշխատակարգը, ընտրվել հանձնաժողովի նախագահի տեղակալը, ձևավորվել է հանձնաժողովի քարտուղարությունը, հավանություն է տրվել Կառավարությանը և Հիմնադրամին ուղղվող գրավոր հարցերին, ինչպես նաև Հաշվեքննիչ պալատին և Պետական վերահսկողական ծառայությանը ուղղված հարցումներին, ընդունվել են հանձնաժողովի աշխատանքների կազմակերպմանը վերաբերող այլ որոշումներ:

Նախընթաց ժամանակահատվածում հանձնաժողովը գումարել է 8 նիստ, կազմակերպել է երեք աշխատանքային քննարկում: Հանձնաժողովի գրավոր հարցումների վերաբերյալ ներկայացված տեղեկությունները ամբողջացնելու, պարզաբանման ենթակա մի շարք հարցադրումների վերաբերյալ քննարկումներ իրականացնելու համար հանձնաժողով են հրավիրվել Հանրապետության նախկին նախագահ Ա. Սարգսյանը, Հիմնադրամի գործադիր տնօրեն Հ. Արշամյանը, Ֆինանսների նախկին և ներկա նախարարները (Ա. Ջանջուղազյան, Տ. Խաչատրյան), աշխատանքի և սոցիալական հարցերի նախկին նախարարներ Զ. Բաթոյանը և Մ. Առաքելյանը, առողջապահության նախկին նախարար Ա. Թորոսյանը: Բոլոր հրավիրված անձինք մասնակցել են հանձնաժողովի քննարկումներին, բացառությամբ Հանրապետության նախագահ Ա. Սարգսյանի:

Հանձնաժողովի նիստերից 7-ը բաց են եղել՝ ԱԺ ինտերնետային կայք էջի ուղիղ հեռարձակմամբ և լրագրողների անմիջական մասնակցությամբ: Հանձնաժողովի նիստերի արձանագրություններն ու ընդունված որոշումները տեղադրվել են հանձնաժողովի անունով բացված ԱԺ ինտերնետային կայքէջում (տես՝ http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111230&lang=arm):

Հանձնաժողովն առաջնորդվել է օբյեկտիվության, անաչառության, համահայկական միասնականությունը խորհրդանշող և համահայկական ներուժի

առարկայական դսևորում հանդիսացող «Հայաստան» համահայկական հիմնադրամի անփոխարինելի դերակատարության սկզբունքային մոտեցումներով:

Թեև հանձնաժողովը կատարել է մեծածավալ աշխատանք, սակայն կան հիմնարար նշանակության մի շարք հարցեր, որոնց վերաբերյալ տարբեր տեսակետները հիմք չեն տալիս հանձնաժողովում ընդհանուր եզրակացությունների հանգելու համար:

Մասնավորապես, հիմնադրամի կողմից Կառավորությանը նվիրաբերության կարգով միջոցների հատկացման և դրանց ծախսման օրենսդրական պահանջների պահպանման հարցում հանձնաժողովի և հանձնաժողովի առանձին անդամների կողմից հնչեցված բազմաթիվ հարցերի վերաբերյալ տրված պարզաբանումները փաստում են, որ առկա են օրենսդրության և դրանց կիրառման վերաբերյալ տարբեր մեկնաբանություններ: Բացի այդ, Կառավարության կողմից (ֆինանսների նախարարություն) գրավոր պատասխանի և հանձնաժողովի նիստում տրված բանավոր պարզաբանումների համաձայն, ներկայացվել են թվով 11 ծրագրեր, որոնց նույնականացումը հիմնադրամի կողմից հատկացված միջոցների հետ պահանջում են ծրագրերի իրականացման իրավական հիմքերի, ծախսված գումարների մեծությունների և արդյունքային ցուցանիշների մանրակրկիտ ուսումնասիրություն: Հավելյալ արձանագրենք, որ հիմնադրամի կողմից Կառավարությանը փոխանցված միջոցների ծախսման ուսումնասիրության լիազորությամբ օժտված պետական այլ մարմիններից Պետական վերահսկողական ծառայությունը պատասխանել է հանձնաժողովին, որ չի իրականացրել ուսումնասիրություն, իսկ Հաշվեքննիչ պալատից ստացված տեղեկատվության համաձայն այդ ծրագրերը ներկայումս գտնվում են հաշվեքննության փուլում:

Այսպիսով, մի կողմից փաստելով հանձնաժողովի ամբողջական կազմով գործունեության սկզբի փաստացի ուշացումը հանձնաժողովի՝ իրավունքի ուժով ստեղծման պահից, մյուս կողմից նկատի առնելով լրացուցիչ ուսումնասիրություններ իրականացվնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև կարևորելով Հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվող հաշվեքննության արդյունքները, անհրաժեշտություն է հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգել օրենքով թույլատրվող ժամկետով (մինչև վեց ամիս):

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

24.03.2022թ.

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասը, 21-րդ հոդվածի 3-րդ մասը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների օգտագործումը ուսումնասիրող Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

Հավանություն տալ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված եվ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների օգտագործումը ուսումնասիրող Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագծին (հիմնական զեկուցող՝ Արծվիկ Մինասյան) և այն սահմանված կարգով ներկայացնել Ազգային ժողովի հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ Արծվիկ Մինասյան